12 01.04.2012թ. – 01.07.2012թ. ընկած ժամանակահատվածում քաղաքապետարանի կատարած աշխատանքները

Դիլիջան համայնքի 2012թ. բյուջեն մշակվել է համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագրի հիման վրա:
Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:
2012թ. երկրորդ եռամսյակում տեղական մուտքերի արդյունավետ հավաքագրման շնորհիվ հավաքագրվել է 128297.1 հազ.դրամի եկամուտ, որը հնարավորություն է տալիս ավելի իրատեսորեն կանխագծելու առաջիկա անելիքները:
Համայնքային ենթակայության 13 ոչ առևտրային կազմակերպությունների, քաղաքապետարանի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի, աղբահանության և սանիտարական մաքրման, ինչպես նաև լուսավորության սպասարկման բնագավառներում ֆինանսավորումները կատարվել են ժամանակին՝ ծրագրով նախատեսված ծախսերին համապատասխան:
Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց պարբերաբար տրվում է դրամական օգնություն:
Յուրաքանչյուր նորածին երեխաների ընտանիքների (թվով 66),՝ տրվել է միանվագ դրամական օգնություն:
Դիլիջան քաղաքում գործող «Հույսի Կամուրջ» հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն:
Գարնանային զորակոչով ՀՀ Զինված ուժերում ծառայության մեկնող զորակոչիկներին տրվել են նվերներ:Դիլիջանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների ավագ նախադպրոցական խմբեր հաճախող թվով 170 երեխաների ավարտական հանդեսի միջոցառումների համար ձեռք են բերվել նվերներ:
Իրականացվում է ՈՒսանողական, Աբովյան, Մյասնիկյան, Հակոբջանյան, Հովսեփյան և Օրջոնիկիձե փողոցների ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման աշխատանքներ: Կատարվել է Պապանինո թաղամասի գերեզմանատուն տանող ճանապարհի կառուցման աշխատանքներ: Բարեկարգվել է Շահումյան փողոցի վերջնահատվածից դեպի Պարզ լիճ տանող ճանապարհը, քաղաքի տարբեր հատվածներում տեղադրվել են ծաղկամաններ: Վերանորոգվում է «Առյուծների աստիճաններ» կոչվող շքասանդուղքի մի հատվածը: Թիվ 2 մանկապարտեզին հարակից տարածքում կառուցվել է հետիոտնի անցուղի:
Իրականացվել է Մյասնիկյան 117 և Մյասնիկյան 144 Ա հասցեների տներին հարակից հենապատերի վերակառուցում, ինչպես նաև Կալինինի 255 հասցեի տանը հարակից պաշտպանիչ պատի կառուցում;:
Հիմնանորոգվում են Շամախյան 3Ա և Գետափնյա 8 հասցեների բազմաբնակարան շենքերի վերելակները:

Շահումյան, Վ.Անանյանի և Այգեստան փողոցներում իրականացվել է փողոցային լուսավորության համակարգի հիմնանորոգում:
ՀՊԾ-ի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր, որի շրջանակներում կատարվում է Դիլիջան քաղաքային համայնքի ենթակայության թիվ 5 մանկապարտեզի մասնակի վերանորոգման աշխատանքներ, Գայի փողոցի հենապատի և Շամախյան փողոցի հեղեղատարի վերանորոգման աշխատանքներ: Դիլիջան քաղաքային համայնքի ներդրումը նշված ծրագրերին կատարվել է նյութերի տեսքով:
Ձեռք են բերվել և քաղաքի տարբեր հատվածներում տեղադրվել վեց մանկական խաղահրապարակներ: Քաղաքն առավել բարետես դարձնելու, ինչպես նաև զբոսաշրջության սեզոնին նախապատրաստելու նպատակով քաղաքի տարբեր մասերում տեղադրվել են նստարաններ և աղբամաններ:
Քաղաքապետարանը միջոցներ է ձեռնարկում իր ենթակայության ենթակառույցների նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ:
ՏԻՄ խրախուսման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան կազմակերպության հետ համատեղ իրականացվում է Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:
Դիլիջանի քաղաքային զբոսայգին նոր սեզոնին նախապատրաստելու, ինչպես նաև բնակիչների ակտիվ հանգիստը առավել հարմարավետ և անվտանգ դարձնելու նպատակով իրականացվել է զբոսայգու խաղային ատրակցիոնների վերանորոգման աշխատանքներ:
Զգալի աշխատանքներ են իրականացվել լուսավորության, աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման, այն առողջարանային քաղաքին վայել կազմակերպեու ուղղությամբ: Կազմակերպվել և անց է կացվել սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ:
Քաղաքային հրապարակում կազմակերպվել են համաքաղաքային միջոցառումներ՝ նվիրված Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան և վերջին զանգին: Ամֆիթատրոնում անցկացվեց «Պարի տոն Դիլիջանում» հանրապետական փառատոնը որին մասնակցում էին մայրաքաղաքից և տարբեր մարզերից ժամանած շուրջ 40 պարային խմբեր; Հիշատակի արարողություն կազմակերպվեց և ծաղկեպսակներ դրվեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-խաչքարին: Մայիսի 9-ին՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 67-րդ և Շուշիի ազատագրման 20-ամյակի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում, հազարավոր դիլիջանցիներ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին զոհվածների հիշատակին:
Դիլիջանի երկրագիտական թանգարանում Բրիտանական խորհուրդը ներկայացրեց «Նորաձևության ճանապարհ՝ երկխոսության սահմանների խաչմերուկում» ծրագրի շրջանակում եվրոպացի և հայ մոդելավորողների ստեղծած հագուստի հավաքածուն:
«Երևանյան հեռանկարներ» փառատոնի շրջանակներում «Դիլիջան» միջազգային փառատոնի մասնակիցները հյուրընկալվեցին Դիլիջանում:
Քաղաքապետարանի կողմից անհրաժեշտ ուշադրություն է ցուցաբերվում սպորտի զարգացմանը: Մարզադպրոցում կազմակերպվեց մարզական խաղերի եզրափակիչ մրցումներ: